

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԵԻ

ՊՕՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ

Հրատարակեց

ԲԱՐԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(Միաբան Ս. Էջմիածնի)

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Երկրորդարժ տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի

1914

2-25

26 SEP 2006

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԵՒ

ՊՕՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ

2105

(ցվյախաճ զգախճույ .ԿՊՈՒՄ զեաաղաղձն ճաղաաղաղձն)

Հրատարակեց

ԲԱՐԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(Միաբան Ս. Էջմիածնի)

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Երեքտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի

1914

(Արտատպած «Արարատ»ի 1914 թ. յունվարի համարից)

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Երբ դրում էինք Հայկական հարցի մասին «Արարատ» ամսաթերթի անցեալ Յունվարի համարում, մենք հետևելով պարբերական թերթերի տուած տեղեկութեանց Հայկական հարցի մասին և ի նկատի առնելով էջմիածնում ստացուած յուսալի լուրերը, ասել էինք, որ «նա գտնուած է ներկայումս իւր լուծման նախօրեակին»:

Եւ արդարև մի քանի օրից յետոյ, ներկայ 1914 թ. Յունվարի 29-ին, Փարիզից վսեմափայլ Տ. Պօղոս Նուբար փաշան հեռագրում է Ազգիս Վեհափառ Հայրապետին հետևեալ ուրախալի հեռագիրը. «Բախսաւոր եմ մասուցանել Ձերդ Սրբութեան ակնածալիւր շնորհաւորութիւններ Հայաստանի բարեօրոգութիւնների համար բարեյաջող համաձայնութեան գալու առթիւ: Ձեր իմասուն հեռաստութեան, բարձր ցուցումների եւ Նորին Վեհափառութեան Ռուսաց Կայսեր բարեխնամ կառավարութեան եռանդուն գործունէութեան շնորհիւ՝ Ասիական Թիւրքիայի մեր եղբայրներն այսուհետեւ հնարաւորութիւն կ'ունենան ապրելու արդար եւ ապանով վարչութեան ներքոյ»:

Վերջապէս տաճկահայերի երկար տարիների տանջալից կեանքից յետոյ լուծուեց Հայաստանի բարենորոգութիւնների խնդիրը:

Անշուշտ Ռուսաց բարեխնամ կառավարութեան ձեռք առած եռանդուն միջոցները Կ. Պօլսի դեսպան Գիրսի միջոցով ամենակարևոր դերը խաղացին Հայկական հարցի լուծման գործում: Որքան որ այդ բարենորոգումների նախագիծը դանազան տեղերից խուզած և պակասաւոր լինի, յամենայն դէպս եթէ եղածն էլ գործադրուեն Հայաստանում, կարելի է յուսալ, որ շուտով վերականգնուի արդարութիւնն և ապահով ապրուստը Հայաստանում: Ի՞նչ խօսք, որ Ազգիս Վեհափառ կաթողիկոսի ներկայացուցիչ վսեմափայլ Տ. Պօղոս Նուբար փաշան իւր դիրքի, եռանդուն գործունէութեան և բռնած տակտիկայի շնորհիւ մեծ յա-

4748-88

Չողութեամբ վերջացրեց իւր վրայ դրած պատասխանատու
և չափազանց կարեւոր պատմական մեծ առաքելութիւնը
և Յունվարի 29-ին Հայոց Հայրապետին և ազգին աւետեց
այդ ուրախ լուրը:

Վսեմ. Տ. Պօղոս փաշան արժանաւոր ժառանգն է իւր
հօր Նուբար փաշայի: Նուբար փաշան ծնուել է 1825 թ.
և վախճանուել է 1899 թուին, և մարմինն ամփոփուած է
Ալէքսանդրիոյ եկեղեցու բակում: Նա եղել է դեսպան Վեն-
նայում 1894 թ. Սալիկ փաշայի օրօք նրան յանձնարարուած
էր կազմակերպել ապրանքների տեղափոխութիւնը Եւրո-
պայից Հնդկաստան Եգիպտոսի վրայով և եգիպտական
առաջին երկաթուղու կառուցումն: Նա Կ. Պօլսում և Փա-
րիզում վարել է բանակցութիւններ Սուէզի ջրանցքի կա-
ռուցման վերաբերեալ և վերջացրել է 1864 թ.: 1866 թ.
նշանակուելով արտաքին գործոց նախարար, Նուբար փաշան
կազմակերպել է միջազգային դատարաններ Եգիպտոսում:
1884—88 և 1894—95 Նուբար փաշան եղել է եգիպտա-
կան նախարարների գլխաւորը*) Տիգրան Նազարեանը
«Տարազի» 1913 թ. Յունուարի համարում հաղորդում է՝
որ «Նուբար փաշան բնիկ Ղարաբաղցի է, հայ լուսաւոր-
չական, նրա պապերը Դաւիթ բէկի զինակից են եղել և
մեծամեծ քաջութիւններ արել իրենց հայրենիքը՝ Տաթևը
պաշտպանելիս»:

Ուրախ ենք՝ որ հայազգի բարձրաստիճան Նուբար
փաշայի արժանաւոր որդի վսեմ. Պօղոս Նուբար փաշան
իւր իմաստուն ճակատը այսօր զարդարեց Հայաստանի տան-
ջուած զաւակների ձեռքով հիւսուած, նրանց ուրախու-
թեան արցունքներով ցողուած և Հայոց Հայրապետի խըն-
կանոտ օրհնութեամբ սքողուած պսակով:

Բարգէն վարդապետ

4 փետր. 1914, Ս. Էջմիածին

*) Տես Большая Энциклоп. հատոր 14 էջ 191.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հայկական հարցը, որ ուռւ-թուրքական պատերազ-
մից յետոյ առաջ եկաւ Տաճկահայ ժողովրդի միանգամայն
անտանելի և դժբախտ կեանքի պատճառով միշտ առան-
ձին հոգածութեան խնդիր է եղել մեր վերջին կաթուղի-
կոսների համար, սկսած Գէորգ Դրդից մինչև ներկայ Վե-
հափառ Գէորգ Ե-րդ կաթուղիկոսը: Խորմեան կաթուղիկոսի
օրօք առանձնապէս սուր կերպարանք ստացաւ յայտնի
Ջարդերի պատճառով: Էջմիածնի կաթուղիկոսների և Կ.
Պօլսի պատրիարքների բողոքներն Եւրոպական պետութիւն-
ներին՝ Տաճկահայոց կեանքի և գոյքի ապահովութեան
առթիւ՝ ստեղծեցին միայն 1878 թ. Սան-Ստեֆանոյի
Դաշնադրութեան 16-րդ և ապա Բերլինի Վեհաժողովի
61-րդ յօդուածներն, որոնք դժբախտաբար մնացին մեռած
թուեր առանց իրականութեան մէջ բարելաւելու տաճկա-
հայ ժողովրդի աղետալի վիճակը: Իսկ 1895 թ. մայիսի
11-ին Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները
ներկայացրին Բ. Դրան բարենորոգութիւնների մի նախա-
գիծ: Այդ բոլորից յետոյ ևս շարունակեցին Հայաստա-
նում ջարդերը և վերջինն եղաւ Ադանայի ջարդը՝ զոհ
տալով 30,000 հայ:

Բայց ոչ մի կաթուղիկոսի օրօք հայկական հարցն
այնքան յուսալի ընթացքի մէջ չէ եղել, ինչպէս ներկայ
Վեհափառ Գէորգ Ե. կաթուղիկոսի օրօք, շնորհիւ Ռուսաց
բարեխնամ կառավարութեան գործ դրած եռանդուն մի-
ջոցների և Վեհափառ Հայրապետի հայրական խոհուն հո-
գացողութեանց: Նոյն իսկ նա գտնուում է ներկայումս իւր
լուծման նախօրեակին:

Նորին Սրբութեան հայրապետական օծումից համա-
րեա չանցած մի ամիս, 1912 թ. օգոստոս ամսին, պար-

բերական թերթերը հաղորդեցին Տաճկահայաստանում ծագած անկարգութիւնները, և հայերի վտանգաւոր դրութիւնը Վանի շրջակայքում և այլուր: Այդ տխուր լուրերը չէին կարող վրիպել Վեհափառի ուշադրութիւնից, ուստի և բարեհաճեց օգոստոսի 28-ին Կ. Պօլսի Տ. Արշարունի պատրիարքին ուղղել հետեւեալ հեռագիրը. «Պօլիս, Հայոց Ամենապատիւ Պատրիարքին. Յաւալի լուրեր ենք լսում Վանի շրջակայքի հայերի դրութեան մասին՝ շուտով հեռադրով յայտնեցէք և մանրամասն նամակով: Ահա և այս հեռագիրն եղաւ սկիզբն հայկական հարցի ներկայ օրջանի, որից յետոյ տեղացին Վեհափառն զանազան բողոքներ հայութեան ամեն կողմերից, որով խնդրում էին Վեհափառ Հայրապետի բարեհաճ ուշադրութիւնը Տաճկահայ ներկայ դժբախտ կացութեան առթիւ: Նորին Սրբութիւնն էլ աւելի սրտին մօտ ընդունելով իւր տարագիր զաւակների խնդիրները՝ հետզհետէ տնօրինում է կարեւոր լուրջ կարգադրութիւններ Հայկական հարցի առթիւ, և գործի յաջողութեան համար Եւրոպայում փսեմափայլ հայազգի Տ. Պօղոս Նուբար փառայի զխաւորութեամբ կարգում մի պատգամաւորութիւն իւր կողմից տրուած հրահանգներով գործելու «Հայկական հարցի» յաջող լուծման համար և զիմումներ անելու Եւրոպական պետութիւններին:

«Արարատի» այս համարից բաց անելով «Հայկական հարց»ի բաժին՝ կ'աշխատենք պարբերաբար այս մասին տալ կարեւոր տեղեկութիւններ, առ այժմ բաւականանալք զետեղել ներկայ համարում յայտնի հրապարակախօս պ. Միլիկովի յօդուածը Փարիզում անցեալ 1913 թ. նոյեմբերին կազմած Միջազգային ժողովի մասին, նոյն ժողովի նախագահ գնդապետ դր Լակրուայի և Վսեմ. Պօղոս Նուբար փառայի ժողովում խօսած ճառերը, որոնք անշուշտ հետաքրքրական կ'ըլլին «Հայկական հարցով» զբաղուողների համար:

ՓԱՐԻԶԻ ՄԻՋՍԶԳԱՅԻՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԹԻ

«Փրանսիական Ասիայի Յանձնաժողովը» հայկական բարենորոգութիւնների հարցի առթիւ չէր կարող ընտրել աւելի յաջող վայրկեան միջազգային հասարակական կարծիքի ներկայացուցիչների մտքերի փոխանակութեան համար՝ քան այն՝ որ իսկապէս ընտրուած էր (կիւրակէ, 17 նոյեմբերի): Հայկական բարենորոգութիւնների հարցը վաղուց հերթական էր դարձել: Դեռ ևս դարնան Ռուսաստանի կողմից ներկայացուած էր Տաճկահայաստանում լինելիք արմատական բարենորոգումների նախագիծը Եւրոպայի վերահսկողութեան ներքոյ: Կ. Պօլսում դեսպանատանց անդամների կողմից այդ նախագծի մասին եղած խորհրդակցութիւնը մի քանի ամիս տեւեց: Ընդառաջ էր գնում այդ նախագիծին Ռուսաստանը՝ որին ոչ առանձին հռահրով պաշտպանում էր Փրանսիան, իսկ Անգլիան լոյրորովին չէր պաշտպանում, առաջ քաշելով եռապետական դաշնակցութեան, մանաւանդ Գերմանիայի, աւելի կամ պակաս բացայայտ ընդդիմադրութիւնը:

Ռուսական նախաձեռնութեան հակառակորդները սկզբում կամենում էին առաջ բերել Տաճկաստանի նախաձեռնութիւնը: Այնուհետեւ երբ այդ չյաջողուեց, նոքա ռուսական նախագծի դէմ առաջ բերին մի շարք էական հակաձառութիւններ: Բայց ներքին կռուի և ընդհարումների այդ ամբողջ պատմութիւնն աշխարհային մղուեց: Սազանովի*) և Կոկովցեւի**) Բերլինում կանցլերի և Յիմմերմանի հետ անձամբ ունեցած բացատրութիւնից յետոյ՝ Գերմանիան վերջնականապէս թեքուեց բարենորոգութիւնների նախագծի պաշտպանութեան կողմը, թէև ամենահամեստ չափերով: Կ. Պօլսում մշակուած հիմնական առաջադրութիւնների համաձայնութեան եկած նախագիծը, վեց կէտերով, մեծ պետութեանների ընդհանուր կամքի արտայայտիչն դարձաւ: Եւ ահա այդ հաւաքական կամքին Տաճկաստանը հակադրեց իւրը: Նա բաց է ի բաց մերժեց ճանաչելու Եւրոպական վերահսկողութեան (կօնտրօլ) սկզբունքը, (որ արդէն Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդուածով ճանաչուած էր): Կարեւոր եղաւ հնարել նոր համաձայնութեան բնոյթ ունեցող առաջադրութիւններ, Բ. Դոան ինքնասիրութիւնը

*) Ռուսաստանի արտաքին գործոց նախարար:

**) Ռուսաստանի նախարարապետ:

խնայելու նպատակով: Բայց այդ առաջադրութիւններն էլ հանդիպեցին Կ. Պօլսում վճռական մերժման:

Իրերի դրութիւնն այդպէս էր՝ երբ հայկական բարենորոգումների Եւրոպական բարեկամներն վճռեցին խօսք բաց անել և ասել այն, ինչ որ պետութիւնները չէին վճռում ասելու՝ այն է Դրան վրայ ճշուում գործ դնելու միջոցների մասին: Այդ միջոցներից ամենից իրականը ներկայանում էր դրամական փոխառութեան յետաձգումն և ինչպիսի ֆինանսական զիջումների խնդիր էլ որ լինի՝ չընդունուի, քանի Դուռը կըյամառի ընդունել պետութիւնների առաջադրութիւնը՝ թէկուզ և այն ամենաշափաւոր ձևի մէջ՝ որպիսինը ստացել է այդ առաջադրութիւնը:

Այդ ստիպողական միջոցները քննութեան առնելու նպատակով ժողովուրդեց Փարիզեան խորհուրդը: Իբրև մեզ հրաւիրող տանտէրներ հանդէս եկաւ «Փրանսիական Ասիայի Յանձնաժողովը», իսկ այդ խորհրդի հոգին էր Հայոց աղգային պատգամաւորութեան նախագահ և լիազօրուած ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից եզրիպատար հայ Պօղոս Նուբար փաշան:

Առաջին խօսքը բնականաբար պատկանում էր նորան, որին և տուեց Յանձնաժողովի հայկական սեկցիայի և մեր խորհրդի նախագահ զինեռալ զը Լակրուան: Նուբար փաշայի արած հարցի պատմական տեսութիւնն իւր բոլոր մանրամասնութեամբ եւ այստեղ առաջ չեմ բերիլ: Կընշանակեմ միմիայն այն առանձնակի անկիւնը, որի տակ արուեց այդ բացատրութիւնը: Նուբար փաշան ի հարկէ հետեւել էր անձամբ հարցի բոլոր վճռական փոփոխութիւններին (перемена) և շատ լաւ ներկայացնում էր իրեն այն բոլոր պայմանները, որոնց միայն աչքի առաջ ունենալով հնարաւոր էր հաշուի առնել, որ բարենորոգութիւնների առաջադրութիւնը կըզտնէ ընդհանուր եւրոպական պաշտպանութիւն: Նուբարից առաջ արդէն մեր նախագահը այդ պայմանների մասին խօսել էր: Վերահսկողութիւնը (կօնտրօլ) կարևոր է և անհրաժեշտ: Բայց նա անհրաժեշտ է «հէնց իրեն Տաճկաստանի շահերի տեսակէտից»: Տաճկաստանն այլ ևս չէ կարող տանել ներքին անիշխանութեան նոր շրջան և Եւրոպայում ոչ ոք հնարաւորութիւն չի ունենալ խանգարել, եթէ «որ և է պետութիւն տաճկական հողերի վրայ աչք ունենալով»՝ առաջ բերի զինուած միջամտութիւն, իւր սահմաններին կից տաճկական հողի վրայ ներքին անիշխանութիւն ծագելու դէպքում: Եւրոպան ընդհանուր ոյժերով պէտք է նախազգուշացնի այդ վտանգը: Այդ տեսակէտից՝ «les reformes en Armenie—c'est la tranquillité d'Europe»: Պիշոնի այդ դարձուածքով որոշուեց խորհրդի ճառերի և վճիռների ընդհանուր տոնը:

Այդ տոնով էլ խօսեց Նուբարը: Հայկական հարցը՝ ոչ միայն

հայկական է, այլ նաև Եւրոպական: Եթէ նորա արժարժման նախաձեռնութիւնն այս անգամ պատկանում է Ռուսաստանին, այդ դէպքում չպէտք է կասկած յարուցանի ուրիշ պետութիւնների մէջ: «Թիւրիմացութիւնները», որոնք առաջ եկան այդ նախաձեռնութեան շուրջը, արդէն ցրուած են այն օրից, երբ Ռուսաստանը յայտարարեց, որ նա չէ կամենում ոչ իւր երկրի հետ միացնել և ոչ մինչև անգամ Հայաստանի ինքնավարութիւնը: Մանաւանդ որ հայերը չունեն անջատողական ձգտումներ: Այդ հիման վրայ և Պօղոս Նուբար փաշան հնարաւոր համարեց ներկայանալ իբրև արտայայտիչ՝ նոցա ձգտումների: Հայերը կամենում են մնալ բարի «Տաճկաստանցիներ» և ցանկանում են միայն մի բան—արդարութեան և հաւասարութեան նկատումն:

Բայց ինչ անես, երբ Դուռը չէ համաձայնում մինչև անգամ նրանց այդ ուղածն էլ երաշխաւորել նրանց հետաւոր վիճակը դնելով բացառապէս իւր սեպհական կամեցողութեան ներքոյ: Անհրաժեշտ է ոչ թէ փոխառութեան մերժումն, այլ միայն «բարեկամական ֆինանսական ճնշումն»: Այլ կերպ՝ Դուռը՝ պետութիւնից ձեռք բերելով մի շարք զիջողութիւններ՝ ստեղծում է այն վտանգաւոր դրութիւնը, որի մասին խօսեց նախագահը: Զավիզ բէյը մեղ հակառակում է՝ որ այդ կը դառնայ երկրորդ Մակեդոնիա: Ի հարկէ նա կըդառնայ երկրորդ Մակեդոնիա, բայց ոչ թէ այն ժամանակ, երբ այնտեղ կըմտնեն բարենորոգութիւնները, այլ այն դէպքում, երբ չեն լինիլ:

Զէ՛ որ Մակեդոնիայում եթէ Տաճիկները հասցրին այն բունի վախճանին, այդ նորա համար էր, որ այնտեղ բարենորոգութիւններ չկային: Ասում են՝ որ պէտք է խնայել Դրան ինքնասիրութիւնը: Բայց Դուռը համաձայնուել է աւելի լուրջ խնդիրների նկատմամբ, քան թէ Հայկական բարենորոգումների ծրագիրն է, երբ գիտակցութեան է եկել որ և է յայտնի քայլի անհրաժեշտութեան մասին: Ի՞նչու հապա Օտոմանեան ինքնասիրութիւնը չէր խօսում, երբ Գերմանական զինեռալին նշանակեցին առաջին կօրպուսի հրամանատար: Տաճիկները առաջարկում են, ինչպէս ասաց մեծ վեզիրը, պահպանել նրանց տիտուլիարնի նահանգապետներին նշանակելով Դրան կողմից և բաւականանալ նահանգապետների մօտ նշանակելով Եւրոպական «խորհրդականներ», որոնց և կըպատկանի ամբողջ ներդրածական իշխանութիւնը: «Ils feront tout, ils seront tout»: Գեղեցիկ, բայց պէտք է որ Եւրոպան այդ իշխանութիւնն էլ ապահովի: Մեծ վեզիր Սայիդը—Եզրիպատար է և դատում է եզրիպատկան կարգերի համաձայն, որտեղ արդարեւ տեղական նախարարներին կից հերիք է եւրոպացիների իրական իշխանութիւնը: Բայց Հայաստանն Եզրիպատար չէ: Այստեղ պէտք

է յամենայն դէպս ապահովել երկու բան: 1) Եւրոպական խորհրդակաճաններին վերապահած իրական գործադիր իշխանութիւն, և 2) Պետութիւնների վերահսկողութիւնը տեղում և ոչ թէ 4. Պօլսի դեսպաններին միջոցով: Իսկ այդ պայմաններն են այնքան նուազագոյն չափով՝ որոնց պահպանութեան համար անհրաժեշտ է պնդել, իսկ ընդհանրապէս զիջելով՝ նշանակում է բարոնորդութեան ամբողջ գործն ենթարկել վտանգի:

Այսպէս խօսեց Նուբարը: Նորա ճառի վախճանից յետոյ ի լուր բոլորի կարգացուեց վճռի նախագիծը և խորհրդին մասնակցողներին մէջ սկսուեց մտքերի կենդանի փոխանակութիւն:

Առաջինը խօսեց Իտալացի հերցոգ դը Անգրիա: Նա լիակատար համաձայնուեց վճռին, բայց զգուշութեամբ խօսեց տաճկական հեղինակութիւնը պաշտպանելու անհրաժեշտութեան մասին: Ի՞նչ վիճակուեց պատասխանել դը Անգրիային՝ մատնացոյց անելով Մեծ Գլադստոնի փորձառութեան վրայ՝ որն իւր 1895 թ. չեստերիան ճառի մէջ տուել է երեք անմոռանալի խորհուրդ Հայկական հարցին վերաբերեալ: Առաջին՝ սահմանափակել խիստ անհրաժեշտութեամբ: Այդ մենք անում ենք՝ ինչպէս և վկայում է Նուբարի ճառը: Երբ Ռուսաստանը պարզեց իւր բարեկարգութիւնների ծրագիրը, մեզ ասացին. դուք կուունկ էք պահանջում երկնքում, աւելի լաւ է ձեռքը տալ ներկարար (թուշուն): Բայց ի՞նչ, այժմ Գերմանիայի հետ համաձայն ենք և ներկարարի: Բայց տուէք մեզ կենդանի թուշուն և ոչ թէ խաղալիք, որը խոնարհում է առաջին իսկ անձրեից: Գլադստոնի երկրորդ խորհուրդը մեզ ապահովում է և այդ. «Մի հաւատաք Դրան խոստումներին, պահանջեք երաշխաւորութիւններ»: Մեր երաշխաւորութիւնը, որ ներկայ դէպքում միակ հնարաւորն է, այդ իրական վերահսկողութիւնն և իրական իշխանութիւնն է: Եւ վերջապէս Գլադստոնի երրորդ խորհուրդն է. «Չպէտք է քաշուել ճնշումներ գործ դնելով 4. Պօլսում արտաքին պահանջներն աւելի լաւ են հասկանում, քան ներքին պարտքը»: Ահա այդ երրորդ խորհուրդն է, որ պէտք է լրացնի մեր վճիռը:

Այնուհետև խօսեց Մերձաւոր Արևելքի հարցերի մասին յայտնի գրող Բընէ Պինոն: Նոյնպէս և խօսեց Բարոն դը Կոնտանսոն, որ մօտիկ անցեալում լոյս ածեց երկրորդ հրատարակութեամբ իւր գիրքը «Ասիական Տաճկաստանում մտցնուելիք բարեկարգութիւնների մասին» (տեմնել այդ գրքի յառաջաբանը՝ որի էական մասը համապատասխանում է վճռի հիմնական մտքին), նա արծարծում է այն միտքը, որ չպէտք է պահանջել Ֆրանսիայից, որ նա դրամ չտայ, միաժամանակ և ձեռք բերելով Տաճկաստանից սրբաշակի գիշումներ և արտօնութիւններ իւրաքանչիւր պետութեան

համար առանձին: Դրամ տալու մերժումն պէտք է լինի ընդհանուր, որպէս զի ոչ ոք յետոյ չկարողանայ պնդադարձել ծածուկ բարեկամի ու Տաճկաստանի պաշտպանի դերում: Ուստի և փոխառութեան մերժումն պէտք է լինի միջազգային և ոչ թէ զուտ Ֆրանսիական:

Ամբողջ ժողովը բնական հետաքրքրութեամբ սպասում էր՝ թէ ի՞նչ կասի Գերմանիայի ներկայացուցիչ պրոֆեսսոր Լիպսիուս, որ վերջին ժամանակ ճանապարհորդել է Կիլիկիայում (Ադանայի վիլայեթ) և որն առանձնապէս աշխատել է հայերին տրամադրել դէպի Գերմանական պետութիւնը: Դժբախտաբար պրոֆեսսոր Լիպսիուսը չկարողացաւ խօսել Ֆրանսերէն և նորա ճառի ծանրաղշիւ սրախօսութիւնը կորաւ թարգմանութեան մէջ, որն արաւ շփեցաբացի յայտնի գործիչ Փալը իւրաքանչիւր խօսքի Ֆրազան իւրար յետեից: Հայոց հարցի մասին խօսում է Սան Ստեփանոյի դաշնագրի 16-րդ յօդուածը և Բերլինի 61-րդը: Թուանշանները փոխել են իրենց տեղերը: Ի՞նչ է նշանակում թուանշանների այդ այլաբանութիւնը: Սան Ստեփանոյի դաշնադրութեան մէջ մէկը հակառակ է 6-ին, այդ մէկը Ռուսաստանն է՝ որ հակառակ միւս պետութիւնների հայերի համար ձեռք բերեց երաշխաւորութիւն: Բերլինի դաշնադրութեան մէջ վեցը է հակառակ մէկի, այդ վեց պետութիւններն են՝ որ չկարողացան ձեռք բերել երաշխաւորութիւն մեկ Տաճկաստանից: Որպէս զի հնարաւոր լինի ուղղել այդ թուաբանութիւնը՝ պէտք է վեցը դարձնել մէկ—հաւաքական միութիւն: Այն ժամանակ և վեցը (պետութիւնները) կըլինեն աւելի ուժեղ, քան մէկը (Տաճկաստան): Ի՞նչ էր արգելք լինում այդ հարսնախօսութեան ճանապարհին: «Գերմանիան կամենում էր պահպանել տաճկական փասաղը, իսկ Ռուսաստանը կամենում էր այն ոչնչացնել: Այժմ այդ տարաձայնութիւնը հեռացում է: Իւր եղբակացութեան մէջ Լիպսիուս գտնում է՝ որ Տաճկաստանին արած զիջողութիւնները պէտք եղածից աւելի քան չափազանց են: Նա կամենում է որ վճիռը դուրս գայ ոչ թէ ներկայ նախագծից, որ չափազանց փոխադարձ իրաւախոսութեամբ է կազմուած, այլ և հիմնական սկզբունքներից, որոնք յամենայն դէպս անհրաժեշտ են պահպանել—այն է վերահսկողութեան սկզբունքը և եւրոպական տեսութիւնների կարգումն:

Նա այնքան էլ գոհ չէ վճռի բնագրի մէջ ընդունուած աւելի ընդհանուր և պակաս որոշակի հետեւալ արտայայտութիւնից. «L'attribution de pouvoirs exécutifs aux fonctionnaires européens»: Այդ պատճառով և վերջին բոլէն Գերմանիայի ներկայացուցիչը արտայայտում է աւելի արմատականօրէն, քան միջին հոսանքը, որն իւրացրուած է մեծամասնութեան կողմից՝ ինչպէս միակ գործնական իրականանալին:

Պօսեղոս հերթն անցնում է անգլիացիներին: Տեղափոխելով նրանց ճառերի կարգը՝ կրկնում Իրլանդական յայտնի պատգամաւոր Օ. Կոնորայից, որն աշխատում է բացատրել Անգլիայի ինքնագաղութացման հարցում: «Մենք բոլորն Հայոց կողմնակից ենք, նրանց ազատութեան և կեանքի համար: Բայց մենք վախեցել ենք, որ բարենորոգումների հարցը աւելի առաջ քաշելով՝ կարող ենք առաջ բերել Հայկական ջարդ: Մեզ չեն համարում բարենորոգութիւնների ջերմեռանդ կողմնակից՝ բայց այդ միայն այն պատճառով՝ որ մենք գլխաւոր դերը զիջել ենք ամենաշատ շահագրգռեալներին»:

Աւելի որոշ արտայայտւում է Վիլիամս, որն է «British Armenian Committee»-ի նախագահը: Նա գիտակցում է՝ որ Յաննա-ժողովը «գործել է լուրջեան մէջ» նախարարութեան հետ միասին, բայց, յայտարարում է նա, այժմ երբ Ռուսաստանը համաձայնուել է Գերմանիայի հետ՝ Անգլիան պատրաստ է գործօն դեր կատարելու: Նա ևս ընդունում է՝ որ բարենորոգութիւնն առանց Եւրոպական մերահսկողութեան (կօնտրօլ) ոչ միայն անօգուտ է, այլ և վտանգաւոր: Անգլիացիք պնդում են՝ որ այդ մտքով լինի յաւելումն վճռին:

Առանձին ուժեղ տպաւորութիւն է առաջ բերում կարճ զրաւոր գեկուցումն Հարալդ Բակստօն պատտօրի գեկուցումն, որ մօտիկ անցեալում իւր եղբայր Նոէլի հետ ճանապարհորդել է Հայաստանում*):

Իրեն կեանքի կենդանի ձայնը այստեղ թափանցում է բոլոր քաղաքագիտական պայմանականութեան միջով: Բակստօնը չէ սահմանափակւում միայն յայտարարելով բարեկարգութիւնների կարեւորութեան յետապնդումն, այլ և նրանց անյետաձգելի դարձնելու մասին: Նա յայտարարում է՝ որ գիւղական ժողովուրդը «պատրաստ է պաշտպանուել զէնքով» և որ նոքա, որոնք չեն գաղթում, պատրաստում են կազմակերպած ընդգրկմադրութիւն: Նա ոչ միայն պահանջում է Եւրոպական վերահսկողութիւն, այլ և մատնանշում է տաճկական իշխանութեան լիակատար անդամալուծութիւնը ու թուլութիւնը: Նա վերջացնում է իւր գեկուցումն հետեւեալ խօսքերով, որ Հայաստանը սկսում է յուսահատուել Եւրոպայից օգնութիւն ստանալու հնարաւորութեան նկատ-

*) Պատտօր Բակստօնը ու եղբայրը մօտիկ անցեալում Արամ Բաֆֆու ընկերակցութեամբ եղել են էջմիածնում ներկայացել Նորին Վեհափառութեան եւ այստեղից Պարսկաստանի վրայով անցել Տաճկահայաստան անձամբ տեսնելու երկրի դժբախտ վիճակը: Այդ է պատճառը՝ որ կենդանի կերպով մատնանշում է Եւրոպայի անելիքը: Ծանօթ. բարգւ.

մամբ և փնտռում է այն աւելի մօտիկ ու շուտով: «Ազգաբնակչութիւնը պահանջում է օգնութիւն, նա պահանջում է իւր ապագայ գոյութեան ապահովութիւնը: Չէ կարելի անվերջ սպասել: Աւելի բարեքը չտեսնելով՝ ժողովուրդը սպասում է Ռուսաստանի գրաւման: Եթէ Ռուսաց զօրքերը կանցնեն սահմանը, նրանց կը հանդիպեն ինչպէս բարեկամների, և կ'ողջունեն՝ ինչպէս ազատիչներ: Ահա թէ ինչու պէտք է աւելի շուտ անենք այն՝ ինչ որ կարող ենք...»:

Բրիտանական յատուկ հետեւողականութեամբ և պարզաբանութեամբ Բակստօնը խօսեց այն, ինչի մասին բոլորն այստեղ մտածում են, բայց ոչ ոք չէ վճռում խօսել այլ կերպ քան աշխատելով խօսքը կողբել ձգել: Բայց մինչդեռ այդ ամենաուժեղ հիմքն է ապացուցանելու այն, որ անհրաժեշտ է ձեռք առնել ամենակարական միջոցները, հէնց իրեն Տաճկաստանի ամբողջութիւնը պահպանելու տեսակէտից, քանի Տաճկաստանը, ինչպէս որ ասել է գեներալ Հակրուա, «չի կրել Մակեդոնիայի նման նոր ցնցումն: Երկուսից մէկը՝ կամ պէտք է ազատել՝ կամ պէտք է բաժանել: Այդ միտքը նկատւում է մինչև անգամ գերմանական պատգամաւորի խօսքերի մէջ, և լոյս է սփռում նորա կառավարութեան դերքի փոփոխութեան վրայ:

Այո, նկատելի է, վերաժողովը ժողովուրդ է ճիշտ իւր ժամանակին: Փոխառութիւնը «միջազգայինացնելու» մասին, ինչպէս ամենալաւ միջոց և նախապատրաստական պայման միջազգային ճնշման, արդէն խօսում են կիսապաշտօնական թերթերը: Եւ չեմ դարմանալ, եթէ Տաճկաստանը այլ ևս առանց փորձելու իւր ճակատագիրը՝ վերջապէս համաձայնութիւն կըտայ մինչև վերջին հնարաւորութեան սահմանը մեղմացրած՝ բայց յամենայն դէպս իրական նախադժի համար, վերելում մատնացոյց արած պայմաններն պահպանելով:

Պ. Միլիկով*)

*) Յօդուածագիր Պ. Միլիկովը յայտնի հրապարակախօս եւ Պետական Դումայի անդամն է՝ որ Ռուսաստանի կողմից ներկայ է եղել Փարիզի միջազգային ժողովին եւ այդ ժողովում հետաքրքրի խօսածների համառօտ քովանդակութիւնն իւր տպաւորութիւններով գրել է «Рѣчь» Քերթում, որն ևս կարելի է համարեցիք Քարգանտաբար տալ «Արարատի» ընթերցողներին:

Փարիզի Միջազգային ժողովի*)

Նախագահ գնդապետ դր Լակրուայի ճառը

Պարոն պատգամաւորներ,

Յայտնում եմ ձեզ շնորհակալութիւնս, որ ժամանել էք Փարիզ այս համագումարին ներկայ դառնալու և մեզ՝ ձեր փորձառութեամբ անհրաժեշտ համար: Առաւելագէտ անդիւան կան հոմիւտէն, իր անցեալ ու ներկայ դործունէութեան շնորհիւ իրաւագոր կրկնէր, քան թէ Ֆրանսիական միջազգային համագումար կազմակերպելու համար հայկական բարենորոգումների առթիւ, սակայն նա հաճել է մեզ թողնել այս նախաձեռնութեան պատիւը և մենք դրա համար նրանից շնորհակալ ենք: Իսկապէս Անգլիայում է հայտնի աշխարհում ուժգնորէն ապրել և այնտեղից է տարածուել այլ վայրեր:

Մենք ներկայումս կարեք չունինք երկար վիճելու հայկական բարենորոգութեան ու է ծրագրի առթիւ: Մենք հասել ենք այն ժամին, երբ պէտք է առաւելագէտ իրադրութիւն, քան թէ նախադէպ յորինել: Նախադէպի քննութեան համար առաջներում ազատ ժամեր շատ են եղել և մինչև անգամ ըստ ամենայնի նրանք հասունացած են այժմ, որովհետև դեռ 1895 թուին Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի ղեկավարները՝ կամենալով իրականացնել Վերլինի վեհաժողովի 61-րդ յօդաւածը, համաձայնութեան եկան Կ. Պոլսում մի ծրագրի շուրջը և Բ. Դրանն էլ հարկադրեցին սկզբունքով ընդունել այն:

Պետութիւնների կամքն էր այդ ծրագրի հարցին վերջ դնել, բայց նա հանդիպեց խոչընդոտների, ընդդիմադրութիւնների, և սրանով է բացատրւում, որ մնաց այսքան երկար ժամանակ որպէս մեռած տառ: Այսօր ցաւալի կ'լինէր վերագառնալ այն յայտարարումներին, որ մատնանշում եմ այստեղ անցողակի կերպով: Բայց եւրոպան, ինչպէս երեւում է, ցանկութիւն ունի նորից ձեռք առնել բարենորոգումների հարցը, որովհետև Ռուսաստանի առաջադրւած ծրագրերը պարունակում է իր մէջ 1895-ի ծրագրի յօդուածներից շատերը, որոնք մի քանի փոփոխութիւններով ընդունւած են մեծ պետութիւնների ղեկավարների կողմից Կ. Պոլսում:

Թերևս կարելի լինէր նրա մէջ մի քանի շտիկումներ անել. բայց արդէն այնքան անգամ է ձգձգւել հայկական բարենորոգումների ծրագրերը, որ կատարեալ անխոհեմութիւն է

*) Ժողովը կայացել է 1913 թ. նոյեմբեր 17-ին:

մատնանշել նրա թերութիւնները, եթէ նոյն իսկ այդ թերութիւնները նշանակալից լինեն: Անտեղի է խնդրել եւրոպային վերաքննել իր վճիռները, խնդրել այժմ ծրագրի կատարելագործման մասին չէ, այլ պէտք է հոգալ նրա իրականացման համար: Հայկական բարենորոգումները շատ են նմանում Պետերսպի կտաւին (յաւիտենական ձգձգում), մենք քննութիւնները մէջ մտնելով կ'նպաստենք չափազանց դանդաղուտ մղուքերին վերստին ձգձգել դործը վերաքննութեան պատրաստուի:

Ուրեմն մենք ժողովել ենք ձեզ այստեղ խնդրելու, որ ազդեք պետութիւնների վրայ և տարբեր երկրների մեր միահամուռ կարծիքը, որպէս անհրաժեշտ ճշշում, թող ի կատար ածել տայ այն նախագիծը, որն ընդունուած է Կ. Պոլսի գետպաններից: Մենք ենթադրում ենք՝ որ հայկական հարցը, ինչպէս ասում են, իրօք հասել է մի վճռական յանգման կէտի: Եթէ թողնեն Տաճկաստանին դուրս գալ Ֆինանսական դժուարակիր կացութիւնից, որի մէջ նա ընկղմւել է Բալկանեան պատերազմի շնորհիւ, այն ժամանակ չափազանց ծանր կ'լինի վերոկսել նրա հետ այնպիսի բանակցութիւններ, որոնք կաւորականային ցանկալի հետեանք առաջացնել: Նա խնդրում է եւրոպական վաճառականութիւնից զոհաբերութիւններ մաքսային յաւելումների ձեռով, որպէս զի իր ապագայ փոխառութիւն հայթայթողներին որոշակի գրաւականներ տալ կարողանայ, այսինքն, նա խնդրում է եւրոպայից, մասնակի կերպով, անհրաժեշտ զոհողութիւններ անել փոխառութեան համար, որին նա ստիպւած է նորից դիմել: Արդեօք, իրաւացի չէր լինի, այսպիսի մոմենտին, հրաւիրել նորան իր հերթին ուղղւած բարենորոգումներն իրադրութիւն, ոչ թէ դէթ մարդկային իդէալին բաւարարութիւն տալու համար, որին զօրավիգ է այսօր քաղաքակիրթ եւրոպան, այլ և նրա համար, որպէս զի ապահովուի այն պարտապանի վիճակն, որ խնդրում է ըստ կարելւոյն լայն օժանդակութիւն հէնց իր պարտատէրերից:

Ճշշում դործադրելով Դրան վրայ՝ մենք նկատի ունինք ոչ միայն հայերի, այլ և նոյն իսկ հէնց իրեն՝ Տաճկաստանի շահերը: Մենք չենք կարծում, որ Տաճկաստանը կ'կարողանայ նորից վերապրել մի նոր անիշխանական ժամանակաշրջան: Վերջինս կ'յարուցանի այնպիսի բռնկումներ, որոնք կարող են վերջանալ ճակատագրական միջամտութիւններով և կ'սպառնան թէ Օտոմանեան կայսրութեան ամբողջութեանը և թէ երկարակեցութեանը: Ահա թէ ինչու հայկական բարենորոգումները հէնց իրեն, Տաճկաստանին անհրաժեշտ են, մանա-

ւանդ որ հայերը չեն խնդրում ու է առանձնակի արտօնութիւն: Բնակութեամբ մի երկրում, սւր ցրուած են և խառն ուրիշ ցեղերի հետ, նրանք կազմում են մեծամասնութիւն Հայաստանի սոսի փոքրիկ մասերում, ուստի և ցանկանում են բարենորոգումներ, որոնցից օգտել կարողանան նրանց նահանգներն անխտիր, այսինքն, նրանց հետ միասին և հետը խառնուած ազգաբնակիւթիւնը: Չունենալով ոչ մի կենդրոն նախոյս ձգտում ճանկաստանի նկատմամբ, նրանք ցանկանում են բարենորոգութիւն, որպէս զի կարողանան մնալ սուլթանի հաւատարիմ հպատակներ, ընդունել աւանց յետին միտումների վեհապետութիւնը, որ ներկայումս, այնպէս անողորմ կերպով ծանրացած է նրանց վրայ:

Ուրեմն մենք չենք խնդրում ճանկաստանից, պնդում ենք այս, մի անխառն և միասնակար արտօնութիւն: Մենք սոսի ցանկանում ենք, հէնց իրեն փրկել իր կորստաբեր յամառութիւնից, և բաց անել նրա աչքերն այն հեռանկարների վրայ, որոնք առաջ են գալիս նրա բնականոնութեան:

Մենք լաւ գիտենք, որ բարենորոգումների բացարձակ պայմանը, պայման, որի վրայ մենք չենք դադարի պնդելուց, որի վրայ պնդում է նաև ընդհանուր կարծիքը և որը կ'ներկայացնուի ձեր խորհրդածութեանը, Եւրոպայի կոնտրոլն է: Հարկաւոր է, որ թուրքերի կողմից հրաւիրուած օտարերկրեայ պաշտօնեաները գտնուեն այնպիսի պայմաններում, որպէս զի ապահովուի պետութիւնների վերահսկողութիւնը, նրանց իրաւաւորութիւններն ու պայմանագրի իրադրութեամբ, ուստի և պաշտօնեաները պարտաւորուած պիտի լինեն հսկելու այն նահանգների վարչութեան վրայ, որտեղ կ'լինեն մայրաքաղաք հայկական բարենորոգումները: Ճանկաստանը պնդում է, որ դա անպատեալ է նրա վեհապետութեան համար, իսկ մենք գտնում ենք, նկատի առնելով անցեալի և մանաւանդ այս վերջին տասներկու ամիսների փորձը, որ ընդհանրապէս, դա նրա իշխանութեան պահպանութեան երաշխիքն է: Եթէ այս բարենորոգումները, որոնք որոշուած էին Մակեդոնիայի համար, գործադրուած լինէին Եւրոպայի կոնտրոլի տակ, կ'սկսած չկայ, որ Սրեէքի պատմութիւնը այդպէս չէր յեղաշրջուի մի տարուայ ընթացքում, ինչպէս որ պատահեց: Յարակցեալ և այս. եթէ ու է տէրութիւն մի վայրկեան անգամ ունենար խռովարար դիտաւորութիւններ Օսմանեան կայսրութեան մի մասի նկատմամբ, ոչ մի բան այնքան ընդունակ չէր լինի նրան յետ պահել այդ քայլից, որքան վերահսկողութիւնը մի խումբ օտարերկրեայ պաշտօնեաների, որոնք կ'աշխատէին միա-

ցեալ պետութիւնների հովանաւորութեան և պաշտպանութեան ներքոյ, վերականգնել Օսմանեան կայսրութեան մէջ մի այնպիսի վարչութիւն, որը չէր թոյլատրի միջամտութեան և ոչ մի պատրուակ:

Ահա պատճառներն, որոնք մեզ ստիպում են այդպէս ուժգին պնդելու այն ծրագրի գործադրութեան վերաբերմամբ, որ նորերումն հաստատուեցաւ Կ. Պոլսում ղեկավարների ձեռքով:

Մենք կարծում ենք, որ տէրութիւնները յանձնառու կ'լինեն մի ծանր պատասխանատւութեան, կ'սկզախեն ընդառաջ ելնել տանկական ազէտներից առաջացող վատթարագոյն արկածներին, եթէ նրանք չառաջադրեն ճանկաստանին ընդունել այդ ծրագիրը, մի ծրագիր, որ հէնց իրենք գտել են բանաւոր. եւ որովհետեւ թիւրքիան ներկայումս խնդրում է նրանց իւր պաշտպանը լինել, նրանք այդ կարող են անել որոշ պայմաններով. մենք կարծում ենք, որ արդի վայրկեանը պատեն է, հասել է վճռական ժամը լուծելու այն խնդիրը, որի ձգձգումը մեծապէս վնասակար է հէնց եւրոպական պետութիւնների վարկին:

Այս կարծիքը զանազան պետութիւններին պարզօրէն յայտարարելու համար, մենք պարտականութիւն համարեցինք ձեռն աջտեղ ժողովել:

Մեր կողմից նախապարտաւորուած առաջադրութիւնների բնագիրը ձեռն կ'արդարորդի մի փոքր յետոյ և դուք կ'տեսնէք, որ նա մեծապէս ներշնչուած է այն անհրաժեշտութիւններով, որ քիչ առաջ հակիրճ կերպով ներկայացրի. բայց նաեւ բան այդ բանին ծանօթանալը, դուք կ'լսէք Պողոս Նուբար փաշային, որ ձեռն կ'պատկերացնի թէ ինչ դրութեան մէջ է հարցը ներկայումս, ինչ յոյս ունի Հայաստանը և ինչից կարող է հիստորիկալ, թէ ինչ տեսակէտից մենք արդարացի կ'լինենք առաջադրել բարենորոգումների յանձնառութիւնը, որպէս պայման sine qua non այն բոլոր ֆինանսական դիւրութիւններին, որոնք պիտի շնորհւին ճանկաստանին:

Գնդապետ դը Լակրուան խօսք է տալիս Պողոս Նուբար փաշային, որ հեռանալ բանախօսութիւնով ղեկուցանում է հայկական բարենորոգմանց հարցի ներկայ վիճակի մասին:

4748-88

2105.

Ն. Պ. Պողոս Նուբար փառայի զեկուցումը.

Պարոններ,

Նախ քան ձեզ ըստ կարելոյն համառօտակի զեկուցանելը հայկական հարցի մասին, ինչպէս նա այսօր զրուած է, ես ցանկանում եմ յայտնել շնորհակալութիւններս Comité de l'Asie Francaise-ին, որին մենք պարտական ենք այս համագումարի նախաձեռնութեամբ, իր նախագահ պ. էմիլ Սենարին, հայկական սեկցիայի նախագահ պ. զնդապետ դը Լալիքուա-ին, որը բարեհաճել է և այսօր մեզ նախագահել և փոխնախագահ սեկցիայի պ. Բոքերտ դը Դէ-ին, որը չի խնայել ո՛չ իր ժամանակը, ո՛չ իր ջանքը այս համագումարը կազմակերպելու և սրա յաջողութիւնը ապահովելու համար:

Նոյնպէս քաղցր պարտքս եմ համարում յայտնելու զանազան երկրներէ պատգամաւորներին, թէ որքան մենք զգացողութեամբ ենք նրանց թանկագին անձնանուիրութեան հանդէպ: Նրանք ո՛չ միայն ցոյց տուին իրենց ամենաեռանդուն գործակցութիւնը, այլ և նոյն իսկ չ'տատանուեցին երկար ճանապարհի յոգնածութիւններն յանձն առնել զալու համար, այս գործին, որին մենք հետևում ենք, բերելու իրենց ջերմ համակրանքն ու իրենց անուանն արժանի հեղինակութիւնը:

Առանձնապէս ինձ հաճելի է, պարոններ, ձեզ վկայելու եմ ըստ շնորհակալքեան այն անձնուիրութեան նկատմամբ, որ դուք չէք խնայել հանդէս բերելու հայկական գործի և մի հիւանդոտ խնդրի լուծման համար, որն երկար տարիներէ ի վեր հանդուրժում է անազորոյն տանջանքներին:

Ձեր շնորհիւ այս համագումարը կարող է ունենալ վճռական հետեւանքներ ու արդատիքներ և մենք ըստ հայերս, կը պահենք ձեր վերաբերմամբ աներկբայելի երախտագիտութիւն:

Այժմս ես ձեզ պէտք է զեկուցանեմ, պարոններ, այնպէս ինչպէս է այս վայրկեանին զրուած հայկական բարենորոգումների հարցը, որպէս զի ձեզ հնարաւորութիւն տրուի մի վճիռ կայացնելու այն բանի համար, որն այս համագումարը շահաւէտ կ'գատի ձեռնարկել յօգուտ մեր գործին:

Ես կ'ընեմ համառօտախօս, բայց իմ զեկուցման պարզութեան համար, ստիպուած եմ անել շատ կարճ պատմութիւն: Ես կ'սահմանափակեմ ասելիքս կարճաբօտ յիշատակումներով՝ որոնք կընդգրկեն մեր հարցի գլխաւոր շրջաններն ու դէպքերը, պետութիւններէ և Բ. Դրան բանակցութիւնները մինչ ցայսօր:

այլ ծագումնաւոր յարաբերութեան ծագումնաւոր զուգորդումներ, զորոնք միմեկին հակադրուած են: * * *

1878 թուին էր, երբ առաջին անգամ հայկական բարենորոգութիւնների խնդիրը յիշատակուեց մի քաղաքական դաշնագրի մէջ. դա Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնն է: Հայկական նահանգների անտանելի դրութիւնը, անապահովութիւնը, կեղեքումները, աւազակների գործողութիւնները, որ այնպէս անընդհատ թագաւորում էին, ստիպեցին Կ. Պօլսի Հայոց պատրիարքին խնդրելու Ռուսաց կառավարութիւնից, որ սա մտցնէ խաղաղութեան դաշինքի մէջ, Հայաստանում բարենորոգումների մուծումն նախատեսող մի յօդուած: Ռուսական կառավարութիւնը այնպիսի պատրաստակամութեամբ համաձայնեց այս խնդրին, որ իւր զօրքը, զբաւելով Անատոլիան, վկայում էր հայ ազգաբնակչութեան տանջանքների վերջ դնելու տնհրաժեշտութեան մասին:

Այստեղից ծագեց Սան-Ստեֆանոյի Դաշնագրութեան 16 յօդուածը: Ահա բնագիրը:

«Որովհետեւ Ռուսաց զօրքերը Հայաստանի մէջ զբաւած երկրներէ յետ քաշւելուց յետոյ՝ յիշեալ տեղերում կարող են կռիւներ ու խառնակութիւններ տեղի ունենալ, որոնք երկու տէրութիւնների լուրջ վարաբերութիւնները կարող են խանգարել, Բ. Դուռը յանձն է առնում անյապաղ իրագործել այն բարւոքումներն ու բարենորոգումները, որ տեղական կարիքները պահանջում են Հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քրդերի և չերքեզների դէմ»:

Դժբախտաբար, Սան-Ստեֆանոյի Դաշ. չ'կարողացաւ ստանալ գործադրութիւն. մի քանի ժամանակից յետոյ նա մուծուեց Բերլինի Դաշնագրութեան մէջ և 16-րդ յօդուածը դարձաւ նոր դաշնագրութեան յօդուած 61:

Ահաւաստիկ սրտ բնագիրը.

«Բ. Դուռը յանձն է առնում անյապաղ իրագործել այն բարւոքումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական կարիքները Հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չերքեզների և քրդերի դէմ»: Բ. Դուռը այս նպատակի համար ձեռք առնւած միջոցները պարբերապէս պիտի ծանօթացնի տէրութիւններին, որոնք պիտի հոկեն նրանց գործադրութեան վրայ»:

Դուք անմիջապէս կ'նկատէք էական տարբերութիւնը, որ կայ այս երկու յօդուածների մէջ: Առաջինի մէջ ասուած էր,

որ Բ. Դուռը պարտաւորւած է անյապաղ իրականացնել բարենորոգումները՝ խուսափելու համար այն ընդհարումներէն, որ կարող էին բորբոքուել զրաւած հողերէն ուսական զօրք հանելու ժամանակ: Լռելեայն ընդունուել էր, որ վերնորոնքի հեռացումն չ'պէտք է կատարուէր մինչև որ բարենորոգումներ չ'մտցնուէին: Այլևս հարց չէր կարող լինել մի այդպիսի պայմանի համար Բերլինի Դաշնագրութեան մէջ. որովհետև զրաւած հողերն, այս դաշնագրութեան զօրութեան համաձայն, պէտք է անմիջապէս մաքրուած լինէին: Այդ պայմանը փութարինեցին մի ուրիշով, որը պետութիւններն տալիս էր հսկողութիւն բարենորոգումներ գործադրելու վրայ: Ուրեմն այլ ևս չկար բռն և անմիջական ներգործութիւն, և որան է որ մենք պարտաւոր ենք բարենորոգումներ անգործադրութիւնը մինչև այսօր: Կարելի է պնդել հակառակն, եթէ Սան-Սթեֆանոյի դաշնագրութիւնն ընդունուած լինէր, այսօր այլ ևս չէր լինի հայկական հարցը:

Բ. Դուռը եւրոպական կարծիքը խաղաղացնելու համար 1879 թուին իրօք ուղարկեց Հայաստան բարձր պատուիրակներ, Արմազին և անգլիացի Բարբեր փաշային, բայց նրանք չկարողացան, չնայած իրանց եռանդին, պատժել նոյն իսկ մի աւագակի: 1880 թուին դեսպանները նոր բանակցութիւններ արին: Բանակցութիւնները ձգձգուեցին և նրանք տուին Բ. Դրան մի Յուշագիր, որից՝ ձեռք թոյլտուութիւնը լինողելով՝ առաջ կ'ընէր այստեղ մի քաղաք:

«Ստորագրողները ցաւ յայտնելով հաստատում են, որ յուլիսի 5-ի յուշագրով նշանակուած ընդհանուր բարենորոգումներն ոչ մի կապ չունեն այն «տեղական կարիքներ»-ի հետ, որ մասնանշում է Բերլինի Դաշնագրութեան 61 յօդուածը: Պետութիւնները, անսարակոյս, բաւականութեամբ կընդունեն լայն բարենորոգումների մոծում Ստամբուլի կայսրութեան բոլոր մասերում: Բայց դա յետ է կատարուել նախ և առաջ Բերլինի Դաշնագրութեան ճշգրիտ իրադրոծումն, և նրանք չեն կարող թոյլ տալ, որ Դուռը համարի իրեն ազատւած այն պարտաւորութիւններէն, որ նա խոստացել է այդ յօդուածի հիման վրայ, առաջադրելով մի այնպիսի նոր վերակազմութիւն, որի մէջ դեր չի խաղում ոչ մի ինքնայատուկ բարենորոգումն յօդուած այն նահանգներ, որ մասնանշուած են հէնց նոյն դաշնագրութեամբ: Այդ նահանգները առանձնակի բնաստութիւնը, այն հանգամանքը, որ նրանք բնակեցրուած են բրիտանեայ տարրերով, պարտաւորեցնում են, որ բոլոր բարենորոգութիւնները հաշտուեն այդ իստակի հետ:

հակառակ դէպքում զրանք չեն էլ ունենայ ցանկալի հետեւանքներ»:

Յուշագիրն եզրակացնում էր, որ «բարենորոգումները պէտք է ձեռնարկուեն տեղական կարիքներ համաձայն և գործադրուին պետութիւնների հսկողութեան տակ»:

Յիշատակելով այս հատուածը՝ ես կամեցայ ձեռք ցոյց տալ, որ 1880 թուին իսկ Դուռը դաշինքով յանձն առած իւր ստիպողական պարտաւորութեանը հակադրում էր ճշտութեամբ այն, ինչ որ այսօր, պետութիւններին և առաջարկում է մոծել, proprio motu, ընդհանուր բարենորոգումներ առանց կոնտրոլի, խուսափելու համար այն բարենորոգումներից, որ նա պարտական էր մտցնել հայկական վիլայէթներում Եւրոպայի հսկողութեան տակ:

Այդ բոլորից պարզ է թէ ինչ արժէք ունի Բ. Դրան այդ վերստին ձեռք առնուած ու փորձուած խաղը:

Դեսպանների յուշագիրը, ինչպէս և Բերլինի Դաշ. 61 յօդուածը, մնաց անհետեւանք և ոչինչ չէ արուած Դրան կողմից վերջ դնելու այն ողբալի կացութեանը, որի մէջ գտնուում են հայկական նահանգները:

1894 թուին տեղի ունեցան Ստամբուլի առաջին կոտորածները. պետութիւնները յուզուեցին, և վերջիշեով Բերլինի Դաշ. 61 յօդուածը սկսեցին Կ. Պոլսում նոր բանակցութիւններ:

1895 թուի մայիսի 11-ին. Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները, Բերլինի Դաշ. տակ ստորագրող ուրիշ երեք պետութիւնների ներկայացուցիչների հաւանութեամբ, ներկայացրին Բ. Դրան բարենորոգութիւնների մի ամփոփ նախագիծ:

Ես չեմ ծանրանալ ձեռք տալու դեսպանների այդ նախագիծի բոլոր պայմանները: Ինձ բաւական է ասել, որ նա ամփոփում է մի գլխաւոր պայման, այն է՝ կազմակերպել եւրոպական մնայուն վերահսկիչ յանձնաժողով:

Ներկար բանակցութիւններից յետոյ, այս նախագիծը շատ թեթեւակի ձեւափոխուած ընդունուեց Դրան կողմից, որը հրատարակեց նոյն իսկ մի Երատէ՝ այն գործադրութեան մէջ մըտցնելու համար:

Հարկմաւոր է ասել, պարոններ, որ այս անգամ ևս ոչինչ չեղաւ: Ես սխալուում եմ՝ Դուռը ցանկացաւ ցոյց տալ, որ նա հակառակ չէ այդ ջանքերին: Նա ուղարկեց Հայաստան մի պատուիրակութիւն Եւրոպի Իաշայի հրամանատարութեամբ,

բայց պատգամաւորութիւնը այնքան քիչ աշխատեց, որ նրա մասին այլ ևս խօսակցութիւն չլսուեց:

Կառավարութեան այս արգելքները հանդէպ, այսինքն՝ նա չէր հաւատում իր խոստումները, տեղի ունեցան Կ. Պօլսոյ ցոյցեր Գրան առաջ:

Ոստիկանութիւնը, որին նախապէս յայտնուած էր այդ մասին՝ արգելք չեղաւ խանգարելու համար: Ընդհակառակն, նա զինեց մահմեդական ազդաբնակչութիւնը և Կ. Պօլսի կոտորածների նշանը տուեց, մի փոքր յետոյ դրան հետեցին 1896 թ. Հայաստանի մեծ կոտորածները, որոնք ունեցան մօտաւորապէս 300,000 զոհեր:

Ժամանակ էր որ այս նախնիքը վերջ ունենար, դժբաղդաբար նա սպառնում էր դարձեալ կրկնուել: Հայերը յուսով էին, որ 1908 թ. Աբդուլ Համիդի դահլիճեցութիւնից յետոյ մի նոր դարաշրջան է սկսուում իրենց համար: Նրանք խանգավառութեամբ ողջունում էին և նպաստում իրենց ձեռք տակ եղած բոլոր միջոցներով սահմանադրական կառավարութեան բարձրացման, հաւատալով այն խոստումներին, որ նրանց տալիս էր երիտասարդ թուրքերի կուսակցութիւնը. այսինքն՝ տարրական օրէնքների զրուատումն և հաւասարութեան և արդարութեան կառավարութեան հաստատումն:

Այս յոյսը շուտով ի դերն ելաւ: Ադանայի արկածները, որ 30,000-ից աւելի զոհեր տարաւ, ցոյց տուին հայերին, որ ոչինչ չէր փոխուած նրանց համար:

Դուք երեւի կարդացել էք, պարոններ, տեղակազիրը Պապիկեան էֆենդու, որ Ադանա ուղարկուած յանձնաժողովի անդամ էր կոտորածների առթիւ քննութիւն կատարելու համար: Այս յանձնաժողովը կազմուած էր Միութեան և Յաւաջաղի մութեան կուսակցութեան համախոհներից, որոնց մէկն էր հէնց ինքը—Պապիկեան էֆենդին, որը մեռաւ յանկարծակի, առանց կարողանալու իր տեղեկագիրը տեղ հասցնել, սակայն սրա մէկ պատճէնը, բարեբաղդաբար գտնուեց և յետոյ հրատարակեց:

Տեղեկագիրը հաստատեց պատասխանատուութիւն այն կառավարութեան, որը պատկանում էր նոյն կուսակցութեան, որի ձեռքին է այսօր իշխանութիւնը:

Այս կոտորածները, ոչ աւելի քան նախկինները, չկարողացան զրգել Դրան վերջապէս մտցնել Հայաստանում բարենորոգումներ, որոնք միայն կարող են խանգարել բոլոր այսօրինակ դարհուրելի նախնիները: Ոչինչ չէին արուած և ոչինչ չէ արուած մինչև այսօր:

Ես հասնում եմ այժմ, պարոններ, Բալիկեան պատեւազմին, որը զրեց եւրոպային անհրաժեշտութեան մէջ զբաղուել Արեւելեան հարցով, Հայերը մտածեցին, թէ հասել է ահա տանջանքների վերջը, թէ հայկական հարցի լուծման վայրկեանը մօտալուտ է, որովհետեւ պիտի վճռուէր Կայսրութեան եւրոպական նահանգների ճակատագիրը:

Եջմիածնայ մեր Կաթողիկոսը համայն Հայոց, ուրեմն և տաճկահայերի, ինչպէս և ամբողջ աշխարհում ցրուած Հայոց, գերագոյն Պեար, վճռեց դիմել պետութիւններին հայցելու նրանց միջամտութիւնը և կեանքի կոչեց, այս դորժի առթիւ, մի պատուիրակութիւն, որը նախադահութիւնն առաջարկուեց ինձ: Ես ինձ թոյլ չ'տուի խուսափել այդպիսի մի յանձնարարութիւնից, որն իմ պարտականութիւնն էր համարում, բայց այնուամենայնիւ ես ցանկացայ հաւաստիանալ նախ քան համաձայնել, թէ մեր ծրագիրը պէտք է հիմնւի Բերլինի Դաշ. 61 յօդուածի վրայ և սահմանափակուի, օրինակի համար, բարենորոգութեանց գործադրման խնդրով, մերժելով ու է անջատողական գաղափար և ու է ինքնավարութեան ցանկութիւն, որն էս համարում եմ մի իսկական ուտոպիա:

Այս ծրագիրը հաստատուեց Նորին Արքութիւնից, ձեռք բերելով ամբողջ հայութեան համաձայնութիւնը, այնուհետեւ ես անմիջապէս սկսեցի բանակցութիւններ: Ես ամեն տեղ հանդիպեցի ջերմաջերմ համակրանքների, ես ստացայ հաւատարմագրում, որ անհրաժեշտ օժանդակութիւնը չի մերժուի՝ ինձ կարեւ եղած դէպքում, բայց ոչ մի լուրջ բանի չէր կարելի ձեռնարկել նախ քան Բալիկեաններում խաղաղութեան վերականգնուելը:

Այս խոստումներն իզուր չանցան: Եւ իբրեւ, հէնց որ հանգամանքները թոյլ տուին, Ռուսական կառավարութիւնը հրաւիրեց տէրութիւնների ուշադրութիւնը հայկական հարցի վրայ և նրա խնդրի համաձայն, Կ. Պօլսի դեսպանները պարտաւորուեցան քննել բարենորոգութեանց այն ծրագիրը, որ ներկայացուած էր Նորին Մեծութեան Ցարի կառավարութիւնից: Ինչպէս պէտք էր ենթադրել, նախապէս առաջ եկան անհամաձայնութիւններ, հիմնուած թիւրիմացութիւնների վրայ, որոնք բարեբաղդաբար վերացան, հէնց որ մի քանի տէրութիւններ համոզուեցան նրանց զրուած ստոյգ բացատրութիւններով այն բանի մասին, որ հայերը բարենորոգումներ խնդ-

բերով ոչ մի յետին միտք չունեն, որ նրանց շահը պահանջում է մնալ Օտտոմաններ, նպատակ ունենալով ձեռք բերել ապահովութիւն և արդարութիւն, որոնց շնորհիւ միայն կարող են ապրել խաղաղութեան մէջ և յառաջագիմել: Նրանք մեծ ջանք չ'որոժարեցին ապացուցանել, որ հայկական նահանգներին նահապետական պայմանները պէտք է որ խուսափելին ինքնավարութեան գաղափարից, ինչպէս ուստափայից:

Պետութիւնների մէջ չէր կարող համաձայնութիւն չըկայանալ շնորհիւ այն բանի, որ ինքը Եւրոպան այսօր ունի շահ, որ կախուած է հայկական բարենորոգումներից: Այդ շահը ծնուած է այն օրից, երբ կառավարութիւնները բացէ ի բաց յայտարարեցին, որ նրանց արաբին քաղաքականութեան հիմքն է կազմում Ասիական Տաճկաստանի ամբողջութիւնը: Որովհետեւ, պարոններ, թոյլ աւելք ինձ ասել, որ հայկական հարցն այսօր միայն հայերին չի հետաքրքրում, նա ստացել է համաւերոպական բնաւորութիւն այն վայրկեանից, երբ Եւրոպան շահագրգռուեց կայսրութեան անձեռնմխելիութեան մէջ՝ նրան օգնութեան համեմելու նպատակով, որը չի կարելի յուսալ առանց բարենորոգումների:

Բայց պետութիւններն ունեն և ուրիշ շահեր հայկական հարցի լուծումը փութացնելու համար: Այս շահերը անտեսական և այլ տեսակի են. Պրանսիային՝ երկաթուղային դժիարտութիւններ Հայաստանում, Գերմանիային՝ Բաղդադինը, Իտալիային՝ Ադալեան և վերջապէս Ռուսաստանին՝ Հայաստանի երկաթուղային գիծը և այդ պետութեան սահմանների մօտակայքում խռովայոյղ պատճառների ոչնչացումն:

* *

Ես առաջի, որ համաձայնութիւն կայացաւ պետութիւնների միջև: Արդարեւ, դեռ պաններն ընդունեցին մի հաշտեցնող նախագիծ, որի մէջ նկատի էին առնուած Բ. Դրան պաշտօնագրութիւնը:

Այս նախագիծի մի համառօտութիւնը, որ ամփոփուած էր վեց գլխաւոր կէտերի մէջ, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանները՝ իրենց և միւս մեծ պետութիւնների անունից ներկայացրին մեծ վեզիրին:

Ես ցանկանում եմ ձեզ մասնանշել այդ կէտերը, որոնք մեր ներկայ վիճաբանութեան պարկայ են կազմում:

1⁰ Հայկական նահանգների երկու հատուածի բաժանումն և պետութիւնների ներկայացրած թեկնածուների միջից Եւրո-

պահան երկու ընդհանուր վերատեսուչների նշանակումն Բ. Դրան կողմից:

2⁰ Ընդհանուր վերատեսուչներին վերապահուած է գործազեղ լեշտանութեան մէջ փոփոխութիւններ անելու իրաւունք. ի պահանջել հարկին բոլոր պաշտօնեաների առանց բացառութեան հրաժարեցնելու իրաւունք և նոյն իսկ նորերին նշանակելու, ի բաց առեալ բարձրագոյն պաշտօնեաներին և դատաւորներին, որոնց նշանակումն կ'շարունակի Բ. Դրուսը ընդհանուր վերատեսուչների մասնաշաժ թեկնածուներին:

3⁰ Ընտրողական սկզբունքով երկու ժողովի հաղապատումն կազմուած էէնոր մասնագիտականներից և միւս կէսը քրիստոնեաներից:

4⁰ Պաշտօնեաներն ընտրուած են հաւասարութեան հիմունքով:

5⁰ Պետութիւնների հրահանգած կոնտրոլը կատարուած է Կ. Պօլսի իրենց դեսպանների և տեղական հեւապատոնների միջոցով:

6⁰ Բ. Դրան և պետութիւնների միջև համաձայնութեան նախատեսութիւն երկու հատուածների մէջ առաջիկայում մացնուելիք բարենորոգմանց մանրամասնութեան մասին: Ինչպէս դուք տեսնում էք, այս նախագիծը երբորդ և չորրդ կէտերով, դեսպանները ընդունում են, որ նահանգային ժողովի կազմութեան և վարչական պաշտօնէութեան մէջ կէսը լինեն հայեր:

* *

Որովհետեւ այդ հարցը եղել է ճգնալից բանակցութիւնների առարկայ, ես կարծում եմ օգտակար կ'լինի ձեզ տալ վիճակագրական մի քանի նորագոյն թուեր:

Ահաւասիկ Հայաստանի վիլայէթների ազգաբնակչութեան պատկերը:

Հայեր	•	•	•	•	•	•	•	1,018,000
Տաճիկներ	•	•	•	•	•	•	•	666,000
Քրդեր (վաչկատուն և նստակեաց)	•	•	•	•	•	•	•	424,000
Այլ և այլ մուսուլմաններ	•	•	•	•	•	•	•	88,000
Չանազան դաւանանքների պատկանողներ	•	•	•	•	•	•	•	254,000
Նստորականներ և յոյներ	•	•	•	•	•	•	•	165,000

Գ ու մ ա ը 2,615,000

Այս թուերը ցոյց են տալիս, որ մօտաւորապէս երկուս
ու կէս միլիօնի վրայ մէկ միլիօնից աւելին հայեր են դալիս,
այն ինչ տաճիկները չեն հասնում նոյն իսկ 700,000-ի և քուր-
դերը, որոնց մէջ և վաչկատունները, միայն 424,000 են: Ուրեմն
հայերի թիւն առանձին վերցրած աւելի շատ է, քան թէ տա-
ճիկներն ու քուրդերը միասին վերցրած: Բայց հարկ չեմ հա-
մարում ձեռք առնել, որ կարեւորութիւնը հարկաւ չի չափւում
լոկ ազգաբնակչութեան թուով և որ վաճառականութիւնը,
արդիւնադործութիւնը և մտաւորական մշակոյթը պէտք է
հաշուի առնել: Այդ պայմաններում հայերը ներկայացնում
են ոչ թէ 50% կամ 60%, այլ 80%-ից աւելի:

Յերաւի, ներմուծող վաճառականութեան մէջ 166 խոշոր
վաճառականներից 141 հայեր են ընդդէմ 13 տաճիկների և
12 յոյների: արտահանութեան մէջ 150 վաճառականներից 127
հայեր են և 23 տաճիկներ: 9,800 մանր առևտրականներից և
արհեստավարներից 6,800 հայեր են և միայն 2,550 տաճիկներ
և 450 այլ և այլ ազգութիւններ:

Արդիւնադործութեան մէջ, 150 գործարաններից, ջրա-
գաններից 130 պատկանում են հայերին, 20-ը տաճիկներին և
3 (գորգերի գործարաններ) օտարերկրեայ կամ խառն ընկե-
րութիւններին: Բոլոր գործարանների և ջաղացների մեքա-
նայավարական ծառայութիւնը վարում են բացառապէս հա-
յերը: Այդ գործարաններում աշխատող բանուորների թիւը
հասնում է 17,700-ի, որից մօտաւորապէս 14,000 հաշոււմ
է: այլեր, 3,500 տաճիկներ և 200 յոյներ և ուրիշներ:

Ինչ վերաբերում է ուսումնարաններին, որոնք իրապէս
ցոյց են տալիս ազգաբնակչութեան կուլտուրայի աստիճանը,
ներկայումս կան Տաճիկահայաստանում, դրանց մէջ հաշուելով
օտարերկրեայ բողոքական և կաթոլիկ առաքելութիւնների
ուսումնարանները, մօտաւորապէս 785 հայկական լուսաւո-
րութեան հաստատութիւններ 82,000-ից աւելի աշակերտնե-
րով, այն ինչ տաճիկները հազիւ ունեն 150 ուսումնարան
մօտաւորապէս 17,000 աշակերտներով:

Գուրգերը ոչ մի ուսումնարան չ'ունեն:

Ահաւասիկ, ես կարծում եմ, թուեր, որոնք լիովին ար-
դարացնում են հայերի խնդիրը, որն ընդունուած է նաև դես-
պանների կողմից:

* *

Սակայն, չնայելով իր չափաւորութեան, հաշտարար նա-
խագիծը մերժւեց Բ. Դրան կողմից, որը չի ցանկանում լսել

ու մի խօսակցութիւն ու է կոնարոյի մասին և խուսափում է
տալ եւրոպական պաշտօնեաներին գործադիր իշխանութիւն:
Մենչեզեռ այդ կոնարոյի անհրաժեշտութիւնը հարկադրական
է, Բ. Դուռը, սակայն փորձում է այդ բանից խուսափել,
չ'նայած որ նա առաջներում լռելեայն, համաձայնել էր Բեք-
լինի Դաշնադրութեան 61 յօդուածի հետ, որ շնորհում է պե-
տութիւններին վերահսկելու իրաւունք, այդ բոլորից յետոյ
այսօր Դուռը ճգնում է հաշկադրել հաշտարար նախագիծին
կիսամիջոց, թերի բարենորոգումների ծրագրերն է:

Չափազանց վտանգաւոր է նրան հետեւել այդ ուղղու-
թեամբ: Մենք չ'պէտք է աչքից փակցնենք, որ բարենորոգու-
թիւնների նպատակն է վերացնել Ասիական Տաճիկաստանի
անգամահատութեան բովանդակ վտանգը և այդ նպատակին
կարելի է հասնել միայն այն դէպքում, երբ կ'զսրճագրուեն
հիմնական բարենորոգումներ, մի անգամ ընդ միշտ հաս-
տատուած, և ոչ թէ կիսամիջոց կամ թերի բարենորոգումներ,
որ կ'առաջադրուեն յետագայում: յաջորդաբար լրացնելու դի-
տումով, ինչպէս որ այդ փորձուել է Մակեդոնիայում, որտեղ
նրանք անյաջողութիւններ և սոսկալի հետեւանքներ ունեցան,
և այդ ծագում էր ստուգապէս այն բանից, որ նախ և առաջ
սահմանափակուեցին մասնակի և թերի բարենորոգումներով
և անմիջապէս հրաժարուեցին հետեւել նրանց գործադրմանը
նոյն իսկ սահմանադրական կառավարութեան օրօք:

Այդ պայմաններում կիրառելի թերի բարենորոգումներն
չեն ունենայ ոչ մի հետեւանք և կառաջացնեն օտարերկրեայ
միջամտութիւնների վտանգը:

Հաշտարար նախագիծ դէմ Դուռը ստիպուած է առաւ-
ելել, ներկայացնել հակա-առաջարկ, որի մէջ խոստանում է
պաշտօնի հրաւիրել օտոմանեան ընդհանուր վերատեսուչներ,
որոնց օգնականները կ'ընեն եւրոպական խորհրդատուներն,
բայց առանց սրանց տալու գործադիր իշխանութիւն:

Դուռը նախատեսում էք արդէն, պարոններ, այնպիսի
բարդութիւններ և դժուարութիւններ, որոնք առաջ կ'ընեն
երկուութիւն: Եւ այդ դէպքում, իրօք, առաջ կ'դան այնպիսի
ընդհանրումներ, որոնք ամլութեան կ'մատեն բարենորոգում-
ները: Այս օրինակ առարկութիւնների հանդէպ Դուռը հա-
մաձայնել էր, յիշաւի, մտցնել իր նախագիծ մէջ մի քանի
ուղղումներ, նամանաւանդ եւրոպական խորհրդատու իշխա-
նութիւնների վերաբերմամբ, բայց առանց այս ուղղումների
էլ կարելի էր վերացնել այն պատահարները, որ այժմ ես կը-
մասնանշեմ:

Եւ համոզուած եմ, որ եւրոպական խորհրդատուները գա-
ղափարը ներշնչուել է կառավարութեան և նամանաւանդ մեծ
վեդերին, Եգիպտոսի հիման վրայ, որտեղ ամեն մի միջնորդու-
թեան մէջ գոյութիւն ունին եւրոպական խորհրդատուներ,
բայց որանք ունեն աւելի լայն գործադիր իշխանութիւն և
երբէք նրանց և միջնորդների մէջ, որոնց նկատմամբ նրանք
ստորագաս են, ընդհարումներ չեն պատահում: Այս երկու
երկրների պայմաններն, անշուշտ բոլորովին նման չեն, որով-
հետև Եգիպտոսում բոլոր խորհրդատուներն անդիւնացիներ են
և նրանք կարգուած են միայն մի պետութեան, այդինքն Անգ-
լիայի կողմից, այն ինչ այդ բոլորովին այլ կերպ կ'ընին Հայաս-
տանում, որտեղ խորհրդատուներն ունենալով անորոշ իրա-
ւասութիւն և ընդ մին առանց պատասխանատւութեան,
նրանց թիկունքին կ'ընեն մէկի փոխարէն՝ վեց պետութիւն-
ներ, որոնց մէջ, չեն կարող յուսալ, պահելու մի անփոփոխ
համաձայնութիւն:

Այդ հոմբինացիան—ունենալ խորհրդատուներ ընդհա-
նոր վերատեսուչների փոխարէն, ուլեմն ընդունելի կ'ընին
միայն այն դէպքում, եթէ որ կարողանային գտնել մի այլ
բանաձև, ըստ որում ընդհանուր վերատեսուչներն ունե-
նային գործադիր իշխանութիւն: Եթէ Դուռը որ և է հնարա-
գիտութեամբ կամենայ իւր պատուախնդրութիւնը չ'զոհելու
համար այդ բանաձևին համակերպել, մենք կ'ընենք առաջինը,
որ կընդունենք խորհրդատուների սխտեմը, բայց այն ժամա-
նակ—թող լաւ իմացուի, որ ձեռք պէտք է բերուեն դեսպան-
ների նախագծի և ուրիշ կէտերը,—որոնք են կոնտրոլը, նա-
հանգական ժողովների և վարչական պաշտօնավարութեան
մէջ հայերի կէս ներկայացուցչութիւնը: Իբրև եղակի ուղղումն
իւր թերութիւնների տաճկական հակա-նախագիծը պայմա-
նադրում է, որ օտոմանեան ընդհանուր վերատեսուչների և
նրանց խորհրդատուների մէջ լինելիք ընդհարումները կ'վե-
րացուեն Միջնորդների Խորհրդի միջամտութեամբ: Բայց յայտնի
լինելով օտոմանեան ղեկանադիտութեան յապաղումներն ու
սովորական քաջքուկները, կարող ենք հաւատացնել, որ յի-
շեալ ընդհարումները կ'ընեն լուծուած յօդուտ ընդհանուր
վերատեսուչների և այն ժամանակ ի հարկէ անարժէք կ'գառ-
նայ և կանգամալուծուի խորհրդատուների իրաւասութիւնը:

Ուրեմն նրա մէջ կայ տրամաբանական և գործնական
իմաստ, քան գեսպանների հաշտարար նախագծի մէջ, որ բո-
վանդակում է մի գործադիր իշխանութիւն, որ տրուած է
Եւրոպական պատասխանատու պաշտօնեաներին, որոնք պար-

տաւոր են գործադրել բարենորոգումները պետութիւնների
հեղուկութեան և կոնտրոլի տակ: Կարող են ձեռնարկել հաշ-
տարար նախագծի ձեռք բերելները տնտեսելու համար, բայց
սկզբունքը պէտք է պահուած լինի իր ամբողջութեան մէջ:

* *

Դուռն իր յամառութիւնը պատճառաբանում է նրա-
նով, որ նա չի ուզում հարւած տալ Կայսրութեան պրես-
տիժին: Բայց թուում է որ այս հոգածութիւնը քիչ է համա-
ձայնելի այն որոշումների հետ, որոնք յայտարարուած են լրա-
գիրներում, ըստ որում նա յանձնում է օտարերկրեայ սպա-
ներին առաջին բանակի հրամանատարութիւնը:

Երկու հաւասար արժէք ունեցող երեւոյթների,—որովհե-
տև բարենորոգումների հարցը կենսական անհրաժեշտութիւն
է Տաճկաստանի համար,—այս տարբեր գնահատումը ցոյց է
տալիս թէ թուրք կառավարութեան ընդդիմադրութիւնը որ-
չափ անկեղծ է:

Սա ապացուցանում է, որ ոչ մի վճռի չի կարելի յանգել
առանց ճշում գործադրելու Դրան վրայ. և մենք հաւատա-
ցած ենք որ, եթէ Եւրոպական միջնորդները որպէս պետու-
թիւնների անփոփոխելի վճիռ մերժէին բոլոր Ֆինանսական
աջակցութիւնները՝ պայմանով, որ բարենորոգումների հարցը
բանական լուծման յանդէք, Բ. Դուռը, որ չի կարող գլուխ
պահել առանց փոխառութեան, չի յապաղիլ այնուհետև հա-
մաձայնել բարենորոգումների հետ այն հիմունքներով, որոնք
պետութիւնների հաւանութիւնն են յօտացել:

Այս ուղղութեամբ տարուած բանակցութիւնները ոչ մի
վնաս չեն բերել Եւրոպական կառավարութիւնների և Բ. Դրան
յարաբերութիւններին. որովհետև Տաճկաստանը վերջապէս
պարտաւոր է հասկանալ, որ իր ներկայ ընդդիմադրութիւնը
հակառակ է հէնց իր սեպական շահերին. մենք համամիտ ենք,
հարկաւ, հաքատելու որ նրա վրայ գործադրելով Ֆինանսա-
կան մի ճնշում, միտք չունենք բնաւ պնդելու, որ պէտք է
նրան խանդաղել փոխառութիւն կնքելու, որն անհրաժեշտ է
կառավարութեան ամբարձման համար: Մենք ցանկանում ենք,
ընդհակառակն, որ նա կնքուած լինի, այն դժուարութիւննե-
րից խուսափելու համար, որոնք կարող են վտանգել հողային
ամբողջութեանը, որի համար հայերը շահագրգռուած են այն-
պէս, ինչպէս և Կայսրութեան բոլոր հպատակները:

Ուրեմն պետութիւնները կարող են գործադրել այդ ճնշ-

շումը, որ չի ունենայ թշնամութեան ու է ընդդէմ, առանց հեռանալու իրենց բարեկամական քաղաքականութիւնից հանդէպ Տաճկաստանի նրանք նոյն իսկ չ'պէտք է ժողառութիւնը բացէ ի բաց մերժեն, բաւական է միայն յայտարարել, որ նրանք պատրաստակամութիւն ունեն հեշտացնելու ժողառութեան կնքումն, պայմանով—եթէ Բ. Գուռը պատրաստուի է իր կողմից բարենորոգումներ իրագործել: Ուրեմն որոշումն կախում կուենայ հէնց իրեն՝ Բ. Գրնից, որին կ'մնայ համաձայնել մի պայմանի, որից կայսրութիւնն առաջինը կօգտուի և որը կ'վերացնի միաժամանակ բոլոր այն բարդութիւնները երկիւղը, որ կարող է սպառնալ Եւրոպայի խաղաղութեան:

* *

Յուսով եմ, պարոններ, այդ պայմանով կնքուած ժողառութեան յանձնառութիւնները կ'լինեն ամենաջերմ օժանդակողներ բարենորոգումների մոծման Տաճկաստանում: Ես երկար չեմ պնդել այս կէտի վրայ՝ նրանց շահը և մերը համանման են:

Ոչ որի համար դադանիք չէ այսօր, որ Տաճկաստանի ֆինանսական դրութիւնը իւր ընդէի մեծ դէֆիցիտներով, արդէն ուժգնօրէն խախտուած էր նախ քան Բալկանեան պատերազմը. և դա աւելի ևս վատթարացաւ այդ պատերազմի արտակարգ ծանրաբեռնութիւններով:

Փոխառութիւնը, որ ներկայումս բանակցութեան շրջանի մէջ է, եղած կացութեանը դարման հասցնել չի կարող: Միայն բարենորոգումները կարող են, կանոնաւորելով կայսրութեան անտեսական աղբիւրները, անիշխանական կարգերը վերացնել, կարգեր, որոնք անբաւականութեամբ են ներկայումս հայկական նա հանգներում. ուստի և, ախր երև է, որ այդ կերպ միայն Տաճկաստանի ֆինանսական դրութիւնը կամրապնդուի:

Նրանք մեծապէս զարկ կ'տան երկրի ներքին հարստութիւնները զարգացման: Մտածելու նիւթ է տալիս այն հանգամանքը, որ ներկայ ժամին հայկական ազգաբնակչութիւնը, մեծ մասամբ գիւղացիներ, չեն ցանում նոյն իսկ իրենց հողերը, որովհետեւ նրանք գիտեն, որ հունձը կ'լինի քուրդական ցեղերի ձեռքով:

Միայն բարենորոգումների գործադրութեամբ մի հարուած ծով կ'վերացուեն ֆինանսական և քաղաքական կարգերի ծանր վտանգները:

* *

Խօսքիս վերջում թոյլ տուէք ձեզ յայտարարել, պարոններ, որ այն բոլոր յուսալարութիւններն, որոնց միջով երեսուն և հինգ տարիներէ ի վեր անց են կացել հայերը, և այն բոլոր հիասթափութիւնները մի արգարացում միայն ունեն, որ ես չեմ կարող այստեղ անկեղծօրէն չ'շեշտել, և այդ այն է, որ մեր առաջ դրուած խնդիրը չի վերաբերում միայն հայերի շահերին, այլ և Եւրոպան ինքը շահագրգռուած է հայկական բարենորոգումները իրագործման խնդրում, այն շարժառիթները հիման վրայ, որ ես ձեզ բացատրեցի և որոնք են՝ պետք ինքնին անհետաքննելի և անհաւաստելի հոգալիք ամբողջութեան անձեռմխելիութիւնը և դրանց ձեռնտութեամբ խաղաղութեան պահպանումը Եւրոպայում: Որովհետեւ, ինչպէս ֆրանսիական կառավարութեան մի մեծահռչակ լանձն ասաց ինձ՝ գերագնացօրէն հակիրճ և ընդհանր թէ՛ «Հայաստանի բարենորոգումները—Եւրոպայի հանգստութիւնն է»:

Ահաւասիկ մի խնդիր, որտեղ մասնակցում են ութ կողմեր և բոլորն էլ ունեն համազօր շահեր:

Վեց պետութիւններ մի կողմից, Հայերն ու ինքը՝ Տաճկաստանը. վերջինս կհասկանայ, յուսով եմ, որ նա աւելի է շահագրգռուած քան թէ Եւրոպան, որովհետեւ իր կայսրութեան ամբողջութեան և անձեռնմխելիութեան խնդիր կայ մէջ տեղ:

Կասկածե՞լ արդեօք Եւրոպական շահերի ներգաշնակութեան նկատմամբ, որ կարող է օրհասական լինել հայերի համար և նրանք կ'մնան դատարկաձեռն:

Բայց խնդրի յաջող լուծման համար, մենք կարելի ունենք ձեր անձնուէր գործակցութեան՝ ձեր յարգելի կառավարութիւններին պարզելու համար իրերի իսկական դրութիւնը այնպէս, ինչպէս ես պատիւ ունեցայ ձեզ գեկուցանելու. և ձեռք բերելու մի որոշակի վճիռ, ըստ որում այդ կառավարութիւնները չ'կորցնեն պատեհ առիթը գործադրելու մի ֆերութիւնները չ'կորցնեն, որը, ըստ ամենայնի, լինի ազդու և թոյլ նանսական ճնշում, որը, ըստ ամենայնի, լինի ազդու և թոյլ տայ վերջ դնել մի դրութեան, որ չի կարող այլ ևս շարունակուել անվտանգ:*)

— 33 —

*) Ժողովի նախագահ Լակրուայի հառն եւ Պօղոս փաշայի զեկուցումը Պարլամանի է L'Asie Française Թերթից Նրեւանի Թեմ. դպ. ուսուցիչ պ. Նազարեան:

Ուղղումն l'Asie Française քերթի խմբագրութեան

1. Նոյեմբեր ամսուայ l'Asie Française յօդուածի մէջ, որ վերաբերում է Պօղոս Նուբար փաշայի զեկուցման հայասիրական Միջազգային համագումարում (հրես 453,) մի դարձուածքի զանցառութիւնը, որն առաջ է եկել ընդօրինակողի սխալմունքից, յեղաթիւրել է վաճառականական, արդիւնագործական և ուսումնարանների վիճակագրութիւնը:

Իբրեւ այդ զանցառութեան հետեանք, ենթադրում է, որ թւերը վերաբերում են ամբողջ Հայաստանին, այն ինչ, իւրօք, նրանք վերաբերում են միայն Սփազի վիլայէթին և վեց վիլայէթներէից այդ վիլայէթն է, ուր հայերը թուով նուազ են և միակն է, որի համար ունեն ճշգրիտ վիճակագրութիւն:

Նկատի առնելով Սփազ վիլայէթի նահապետական պայմանները, կարող ենք հաւատարմացնել, որ եթէ ունենային Հայկական թուրք նահանգների լրիւ վիճակագրութիւն, հայ արհեստաւորների տոկոսն աւելի բարձր կ'լինէր *):

*) Այս ուղղումն պէտք է ի նկատի առնենալ եւ գրքիս 26 էջի ընթերցման ժամանակ:



22

Մեր աշխատությունները՝

Թ. Կ.

1. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիթեցւոյ,
Գ. տպագրութիւն 1896 թ. վաղարշապատ . 2 »
- 2 Խաչատուր արեղայի Զուգայեցւոյ «Պատմութիւն
Պարսից» 1905 թ. վաղարշապատ 1 25
3. Ա. Կրիմսկի «Մանեգական աշխարհն ու նրա
ապագան», թարգմանութիւն, 1906 թ. վաղար-
շապատ » 60
- 4 Կաթողիկոսական ընտրութիւն և կանոններ,
1908 թ. վաղարշապատ » 40
5. Ա. Էջմիածնի կալուածներն ու նրանց Բարեկար-
գութեան նրադիրը, 1908 թ. վաղարշապատ » 20
6. Հայկական հարցը և Պօղոս Նուբար փաշան . » 15

→ ԳԻՐՆ Է 15 ԿՈՊ. ←

Գումարով գնողներին 20⁰/₀ զիջում:

Գրմել՝ Тифлисъ, Книжн. магазинъ «Гиръ»
Կամ մեզ Ս. Զյուլիան, Архимандриту Бабкену.

